ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-241-19.04.2013-ՊԻ-010/0) վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ առաջարկում ենք՝

1. 2-րդ հոդվածով խմբագրվող՝ օրենսգրքի 138-րդ հոդվածը 3-րդ մասի 2-րդ կետում նշված «տասնչորս տարին» բառերից և 4-րդ մասում նշված «12» թվից առաջ լրացնել «ակնհայտ» բառով, քանի որ, անձին պատասխանատվության ենթարկելիս, կատարած հանրորեն վտանգավոր արարքի հանդեպ նրա հոգեկան վերաբերմունքի անտեսումը կհանգեցնի օբյեկտիվ մեղսայնացման, ինչը չի բխի ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված՝ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքից:

Նույնը վերաբերում է նաև օրենքի նախագծի 3-րդ հոդվածով խմբագրվող՝ օրենսգրքի 139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետին:

Բացի դրանից, օրենքի նախագծի 5-րդ հոդվածով խմբագրվող՝ օրենսգրքի 141-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով որպես ծանրացուցիչ հանգամանք նախատեսված է տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ նշված հոդվածով նախատեսված արարքի կատարումը, մինչդեռ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում խոսքը վերաբերում է ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձին: Այդ առումով օրենքի նախագծի նշված հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը նշված «տասնչորս» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «ակնհայտ» բառով:

Նույնը վերաբերում է նաև օրենքի նախագծի 6-րդ հոդվածով խմբագրվող՝ օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում նշված «տասնչորս» և 3-րդ մասի 2-րդ կետում նշված «տասներկու» բառերին:

2. 2-րդ հոդվածով խմբագրվող՝ օրենսգրքի 138-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «գիտակցելու կամ հասկանալու» բառերն անհրաժեշտ է փոխարինել «գիտակցելու» բառով, քանի որ նշված բառերի մեջ իմաստային տարբերություն չկա:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Օրենքի նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**Եզրակացություն**

**<Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

<Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն:**

## ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

**1.«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:**

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը վերաբերում է *անձի անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների համար նախատեսված պատժատեսակները խստացնելուն, մասնավորապես՝ լուրջ փոփոխություններ են առաջարկվում անչափահասների նկատմամբ կատարվող նման բնույթի հանցագործությունների պատիժները խստացնելու ուղղությամբ* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով՝ (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է էապես վերափոխել սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների հետ կապված իրավահարաբերությունները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը, պայմանավորված իրավախախտման համար ներկայումս կիրառվող տուգանքի չափի՝ նախագծով առաջարկվող նվազումով, կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի՝ իրավախախտումների գծով մուտքերի նվազմանը, որի չափը հնարավոր չէ գնահատել՝ ելնելով եկամտատեսակի բնույթից:

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-241-19.04.2013-ՊԻ-010/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 75-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 7-րդ մասով.

«7. Սույն օրենսգրքի 132.2-րդ եւ 168-րդ հոդվածներով, ինչպես նաեւ անչափահաս տուժողի նկատմամբ սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է տուժողի տասնութ տարին լրանալու պահից:»:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 138-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 6-րդ, 7-րդ, 8-րդ եւ 9-րդ կետերով՝

«6) կատարվել է ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

7) կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով,

8) կատարվել է ուղղիչ հիմնարկում, կալանավորվածներին կամ ձերբակալվածներին պահելու վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժհաստատությունում գտնվող անձի նկատմամբ համապատասխան հաստատության աշխատակցի կողմից իր պաշտոնեական կամ ծառայողական դիրքի օգտագործմամբ:

9) զուգորդվել է անձի առեւանգմամբ կամ անձին ազատությունից ապօրինի զրկելով՝»,

2) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն,

2) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 4-րդ մասով.

«4. Սույն օրենսգրքի 138-րդ եւ 139-րդ հոդվածների իմաստով անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, ով որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաեւ 12 տարին չլրացած անձը:»:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 139-րդ հոդվածում՝

1)1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սեքսուալ բնույթի՝ այդ թվում համասեռական գործողությունները տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով՝»

2) 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝ 6-րդ, 7-րդ, 8-րդ եւ 9-րդ կետերով՝

«6) կատարվել է ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

7) կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով,

8) կատարվել է ուղղիչ հիմնարկում, կալանավորվածներին կամ ձերբակալվածներին պահելու վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժհաստատությունում գտնվող անձի նկատմամբ համապատասխան հաստատության աշխատակցի կողմից իր պաշտոնեական կամ ծառայողական դիրքի օգտագործմամբ,

9) զուգորդվել է անձի առեւանգմամբ կամ անձին ազատությունից ապօրինի զրկելով՝»,

3) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն,

2) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 140-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«*Հոդված 140. Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը*

1. Անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի՝ այդ թվում համասեռական գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ եւ 132.2-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ հինգից տասներկու տարի ժամկետով:»:

***Հոդված 5.*** Օրենսգրքի 141-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«*Հոդված 141. Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ*

1. Տասնութ տարին լրացած անձի կողմից սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելն ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ՝ սույն օրենսգրքի 138-րդ կամ 139-րդ հոդվածներով կամ 140-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված հանցանքների հատկանիշների բացակայության դեպքում՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) քսանմեկ տարին լրացած անձի կողմից,

2) մի խումբ անձանց կողմից,

3) միեւնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից տաս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն,

2) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

***Հոդված 6.*** Օրենսգրքի 142-րդ հոդվածը շարադրել հետեյալ խմբագրությամբ՝

«*Հոդված 142. Անառակաբարո գործողությունները*

1. Ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհինսնապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

2) քսանմեկ տարին լրացած անձի կողմից,

3) մի խումբ անձանց կողմից

4) միեւնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար,

5) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ,

6) էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն,

2) տասներկու տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

***Հոդված 7.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

***Ներկա իրավիճակը, առկա խնդիրները եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը***

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարլեու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է էապես վերափոխել ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 18-րդ գլուխը, ինչպես նաեւ համապատասխան լրացումներ կատարել Օրենսգրքի «Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով» վերտառությամբ 75-րդ հոդվածում:

Օրենսգրքի 18-րդ գլխով նախատեսված են սեռական ազատության եւ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները: Օրենսդրական նախաձեռնությունն ուղղված է ինչպես կանխարգելելու անձի սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները, այնպես էլ խստացնելու այդ հանցագործությունների համար նախատեսված պատժատեսակները: Առավել լուրջ փոփոխություններ են առաջարկվում անչափահասների նկատմամբ կատարվող նման բնույթի հանցագործությունների պատիժները խստացնելու ուղղությամբ:

Օրենսգրքի «Բռնաբարություն» վերտառությամբ 138-րդ եւ «Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները» վերտառությամբ 139-րդ հոդվածների որպես ծանրացնող հանգամանք նախատեսված չէ արարքն ակնհայտ հղի կնոջ նկատմամբ կատարելը, զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով կատարելը, նշված հոդվածների առաջին մասով նախատեսված արարքն ուղղիչ հիմնարկում, կալանավորվածներին կամ ձերբակալվածներին պահելու վայրերում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժհաստատությունում գտնվող անձի նկատմամբ համապատասխան հաստատության աշխատակցի կողմից իր պաշտոնեական կամ ծառայողական դիրքի օգտագործմամբ կատարելը: Օրենսգրքի 138-րդ եւ 139-րդ հոդվածներով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված չէ նաեւ համապատասխան արարքի կատարելը, եթե դա զուգորդվել է անձին առեւանգելով կամ ազատությունից ապօրինի զրկելով:

Օրենսգրքի 138-րդ կամ 139-րդ հոդվածների առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հղի կնոջ նկատմամբ որպես ծանրացնող հանգամանք սահմանելու անհրաժեշտությունը պայմանավորված է հանրային վտանգավորության առավել բարձր աստիճանով: Նշված դեպքում հանցավորը ոտնձգություն է կատարում ինչպես կնոջ սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության նկատմամբ, այնպես էլ նրա պտղի նկատմամբ:

Օրենսգրքի 138-րդ կամ 139-րդ հոդվածների առաջին մասով նախատեսված արարքը զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով կատարելը որպես ծանրացնող հանգամանք նախատեսելը անհրաժեշտ է, քանի որ զենքի գործածումը կամ գործածման սպառնալիքը հանցագործության կատարման համար առկա դժվարությունները վերացնելու միջոց է հանդիսանում, միաժամանակ իրական վտանգ ներկայացնելով տուժողի կյանքի եւ առողջության համար:

Օրենսգրքի 138-րդ կամ 139-րդ հոդվածների առաջին մասով նախատեսված արարքն ուղղիչ հիմնարկում, կալանավորվածներին կամ ձերբակալվածներին պահելու վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժհաստատությունում գտնվող անձի նկատմամբ համապատասխան հաստատության աշխատակցի կողմից կատարելը որպես ծանրացնող հանգամանք նախատեսելը լրացուցիչ երաշխիք է նշված հաստատություններում գտնվող անձանց սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության նկատմամբ ոտնձգությունները կանխարգելելու համար: Այս դրույթի սահմանումը կարեւորվում է, քանի որ նշված հաստատություններում գտնվող անձիք, ելնելով իրենց ֆիզիկական կամ հոգեկան վիճակից, առավել խոցելի են եւ հետեւաբար ավելի մեծ է 138-րդ կամ 139-րդ հոդվածներով նախատեսված արարքը հանցավորի կողմից իր պաշտոնեական կամ ծառայողական դիրքի օգտագործմամբ իրականացնելու վտանգը:

Օրենսգրքի 138-րդ կամ 139-րդ հոդվածների առաջին մասով նախատեսված արարքի կատարման դեպքում անձին առեւանգելը կամ ազատությունից ապօրինի զրկելը հեշտացնում է տուժողի կողմից դիմադրությունը հաղթահարելու հնարավորությունը, ինչն իր հերթին դյուրին է դարձնում հանցավորի համար համապատասխան հանցագործություն կատարելը, ինչով էլ եւ պայմանավորված է այն որպես ծանրացնող հանգամանք նախատեսելու անհրաժեշտությունը:

Օրենսգրքի 138-րդ, 139-րդ, 141-րդ եւ 142-րդ հոդվածներով որպես արարքի առանձնապես վտանգավոր տեսակ նախատեսված չէ դրա կատարելը երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն: Այս դրույթը որպես ծանրացնող հանգամանք նախատեսելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ. ա) որպես տուժող հանդես է գալիս տասնութ տարին չլրացած անձը; բ) վերը նշված անձիք հանդես են գալիս որպես հատուկ սուբյեկտ, ում վրա դրված է լրացուցիչ պարտականություն (երեխայի դաստիարակության կամ խնամքի):

Հարկ է նշել նաեւ, որ Օրենսգրքի 138-142-րդ հոդվածներում տեղ են գտել որոշ ձեւակերպումներ, որոնք անհրաժեշտ է հստակեցնել, ինչպես նաեւ հասկացություններ, որոնց սահմանումը բացակայում է: Նմանատիպ թերկարգավորվածությունը իրավակիրառ պրակտիկայում կարող է արարքների որակման հետ կապված դժվարություններ առաջացնել: Մասնավորապես Օրենսգրքի 138-րդ եւ 139-րդ հոդվածներում առկա է «անօգնական վիճակն օգտագործելով» եզրույթը, սակայն բացված չէ դրա բովանդակությունը: Այլ կերպ ասած նախատեսված չեն այն չափորոշիչները կամ պայմանները, որոնց առկայության դեպքում անձը համարվում է անօգնական վիճակում գտնվող:

Օրենսգրքով նախատեսվում է քրեական պատասխանատվություն տասնութ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար, սակայն որպես ծանրացնող հանգամանք նախատեսված չէ տվյալ արարքի առավել բարձր հանրային վտանգավորություն ներկայացնող որեւէ տեսակ, ինչպիսիք են, օրինակ, արարքը կատարելը միեւնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար, ինչպես նաեւ այն կատարելը մի խումբ անձանց կողմից կամ քսանմեկ տարին լրացած անձի կողմից: Նշված արարքի առավել վտանգավոր տեսակ է այն կատարելը տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ կամ այն կատարելը այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականություն: Արարքի առավել բարձր հանրային վտանգավորություն ներկայացնող ձեւերի բացակայության հետ կապված օրենսդրական թերկարգավորում առկա է նաեւ «Անառակաբարո գործողությունները» վերտառությամբ 142-րդ հոդվածում:

Օրենսգրքի 75-րդ հոդվածում կատարվող լրացման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի շարք հանցագործությունների կատարման պարագայում անչափահաս տուժողը տարիքային գործոնով պայմանավորված որոշակի հանգամանքներից ելնելով ավելի հակված է տեւական ժամանակ գաղտնի պահել իր նկատմամբ կատարված հանցագործության փաստը: Առաջարկվող փոփոխությունն ուղղված է ապահովելուն, որ անչափահաս տուժողի պարագայում՝ վերջինիս հոգեբանական եւ ֆիզիոլոգիական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ քրեական պատասխանատվության ենթարկելու ողջամիտ եւ բավարար ժամկետ սահմանվի:

***Առաջարկվող լուծումները***

Նախագծով առաջարկվում է վաղեմության ժամկետն անցնելու հետեւանքով քրեական պատասխանատվությունից ազատելուն վերաբող Օրենսգրքի 75-րդ հոդվածում լրացում կատարել, ըստ որի անչափահաս տուժողի նկատմամբ սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված՝ Օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետի հաշվարկը կսկսվի տուժողի տասնութ տարին լրանալու պահից: Միեւնույն ժամանակ օրենսդրական կարգավորումների միասնականությունն ապահովելու նպատակով վաղեմության ժամկետի հաշվարկման նշված

կարգը կգործի նաեւ Օրենսգրքի 132.2 - րդ եւ 168-րդ հոդվածներով նախատեսված արարքը կատարելու դեպքում:

Օրենսգրքի 138-րդ եւ 139-րդ հոդվածներում կատարվող փոփոխություններով առաջարկվում է այդ հոդվածների 2-րդ մասով նախատեսված ծանրացնող հանգամանքներին ավելացնել նաեւ համապատասխան արարքը կատարելը.

- ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

- զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով,

- ուղղիչ հիմնարկում, կալանավորվածներին կամ ձերբակալվածներին պահելու վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժհաստատությունում գտնվող անձի նկատմամբ համապատասխան հաստատության աշխատակցի կողմից իր պաշտոնեական կամ ծառայողական դիրքի օգտագործմամբ,

- անձին առեւանգելով կամ ազատությունից ապօրինի զրկելով:

Նախագծով առաջարկվում է նաեւ Օրենսգրքի 138-րդ եւ 139-րդ հոդվածների 3-րդ մասով որպես արարքի առանձնապես վտանգավոր՝ նոր տեսակ սահմանել համապատասխան արարքը կատարելը երեխայի նկատմամբ այն անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն: Նշված լրացմամբ պայմանավորված՝ Նախագծով առաջարկվում է նաեւ Օրենսգրքի 138-րդ եւ 139-րդ հոդվածների 3-րդ մասի սանկցիայում նախատեսված հիմնական պատժի հետ միասին սահմանել լրացուցիչ պատիժ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ երեք տարի ժամկետով:

Նախագծով բացվել է նաեւ Օրենսգրքի 138-րդ եւ 139-րդ հոդվածների առաջին մասում առկա «անօգնական վիճակ» եզրույթի բովանդակությունը, ըստ որի Օրենսգրքի 138-րդ եւ 139-րդ հոդվածների իմաստով անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, ով որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաեւ 12 տարին չլրացած անձը:

Նախագծով առաջարկվում է Օրենսգրքի 140-րդ հոդվածով նախատեսված արարքի ծանրացնող հանգամանք սահմանել այդ արարքը ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ կատարելը՝ նախատեսելով ավելի խիստ պատիժ՝ ազատազրկում հինգից տասներկու տարի ժամկետով:

Նախագծով առաջարկվում է տասնութ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու դեպքում Օրենսգրքի 141-րդ հոդվածի երկրորդ մասով՝ որպես ծանրացնող հանգամանք նախատեսել միեւնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար կատարելը, ինչպես նաեւ նույն արարքը կատարելը մի խումբ անձանց կողմից կամ քսանմեկ տարին լրացած անձի կողմից: Նշված ծանրացնող հանգամանքների առկայության պարագայում առաջարկվում է սահմանել ավելի խիստ պատիժ՝ չորսից տասը տարի ժամկետով ազատազրկում:

Նախագծով առաջարկվում է 141-րդ հոդվածի երրորդ մասով սահմանել առավել խիստ պատիժ համապատասխան արարքը տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ կատարելու համար, այն դեպքերում, երբ արարքը կատարվում է այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականություն՝ որպես պատիժ սահմանելով ազատազրկում հինգից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Առաջարկվում է նաեւ Օրենսգրքի 142-րդ հոդվածի երկրորդ մասով որպես ծանրացնող հանգամանք նախատեսել հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը կատարելը՝

1) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

2) քսանմեկ տարին լրացած անձի կողմից,

3) մի խումբ անձանց կողմից,

4) միեւնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար,

5) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ,

6) էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամաբ:

Բացի այդ, Օրենսգրքի 142-րդ հոդվածի երկրորդ մասում նախատեսված ծանրացնող հանգամանքերի պարագայում առաջարկվում է սահմանել երկուսից հինգ տարի ժամկետով ազատազրկում: Ավելի խիստ պատիժ է առաջարկվում սահմանել այն դեպքերի համար, երբ համապատասխան արարքը կատարվել է երեխայի նկատմամբ այն անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության կամ խնամքի պարտականություն, ինչպես նաեւ այն կատարելը տասներկու տարին չլրացած անձի նկատմամբ: Նմանատիպ դեպքերի համար նախագծի երրորդ մասի սանկցիայով նախատեսվում է երեքից յոթ տարի ժամկետով ազատազրկում՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հարկ է նշել նաեւ, որ Նախագծով առաջարկվում է կատարելագործել Օրենսգրքի 18-րդ գլխով նախատեսված սեռական ազատության եւ սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված որոշ հանցագործությունների դիսպոզիցիաները, ինչպես նաեւ որոշակի փոփոխություններ կատարել կոնկրետ հոդվածների սանկցիաներում: